

1. Տեսլական. Ո՞րը կլինի Ձեր՝ որպէս Վրաստանի նախագահի ամենամեծ նպատակը:

Վրաստանի միավորումը, Վրաստանի ազգային անվտանգության ապահովումը, ճիշտ արտաքին քաղաքականության վարումը, աշխարհում պատվավոր տեղի հաստատումը: Դրա հետ միասին արմատապէս պետք է փոխվի պետական դասակարգման և կառավարման գոյություն ունեցող համակարգը: Պետության նոր դասակարգումը սիստեմորեն պետք է բացառի առաջնորդամուկաբարությունը և ավտորիտարային ռեժիմի առաջացումը: Պետության գլխավոր հոգածությունը պետք է լինի մարդը:

2. Կրթություն. *Ո՞րն է կրթական քաղաքականության Ձեր տեսլականը: Ինչպիսի՞ քաղաքականություն էք առաջարկում տարրական, միջնակարգ, մասնագիտական եւ բարձրագույն կրթության որակը բարելավելու համար:*

Կրթության համակարգի բարեփոխման նպատակը ընդհանուր մասնագիտական և բարձրագույն կրթության որակի բարելավումն է, աջակցությունը գիտելիքի և արհեստավարժության վրա հիմնված հասարակության ձևավորմանը, գիտության զարգացման համար պատշաճ պայմանների ստեղծումը: Համընդհանուր կրթության ոլորտում, իմ նպատակն է բոլոր քաղաքացիների համար ապահովել պատշաճ համընդհանուր կրթություն ստանալը:

Կրթության աջակցությունը վճռական նշանակություն ունի, քանզի ուսումնառության գործընթացում է կատարվում ապագա սերնդի որպէս անձնավորություն ձևավորումը: Այդ պատճառով դպրոցը և ընդհանուր առմամբ ուսուցումը միայն գիտելիք չպետք է տա պատանուն, դպրոցը պետք է դաստիարակի և ձևավորի նրանց որպէս իր երկրի պատվավոր քաղաքացիների: Այս գործում չափից մեծ է ընտանիքի դերը: Ուսումնարանը, որպէս ժողովրդի կողմից վարձակալած հիմնարկություն, պարտավոր է իր գործունեությունը վարել հասարակության շահերին համապատասխան և քանի որ հասարակությունը հանդիսանում է ընտանիքների միասնություն, կրթության համակարգը պետք է համապատասխանի ընտանիքի ավանդական արժեքներին: Դա ճիշտ այն բանի երաշխիքն է, որը ապագա սերնդին կհեռացնի հասարակության համար անընդունելի արատավոր դրսևորումներից:

Որակյալ և ժամանակակից բարձրագույն կրթության օժանդակությունը Վրաստանի գիտական կարողության բարձրացման և տնտեսական առաջընթացի նախապայմաններից մեկն է: Կրթության բոլոր մակարդակների համակարգը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին և միևնույն ժամանակ հիմնվի վրացական ազգային արժեքների վրա:

Լավ պետք է գիտակցեք, որ անգրագետ մարդուն պահելը պետության վրա ավելի թանկ է նստում, քան կրթված, աշխատանք ունեցողին:

3. Հարկեր. Ձեր կարծիքով ինչպիսի՞ հարկային համակարգ պետք է ունենա Վրաստանը եւ ո՞ր սկզբունքների հիման վրա պետք է սահմանվի եկամտահարկը:

- Վերացվի եկամտահարկը տոկոսներով,
- Վերացվի ՀԱԱ-ի հարկը մաքսակետերում,
- Եկամտահարկը կրճատվի մինչև 15%,
- Վերացվի ֆինանսական ոստիկանությունը,
- Իրավախախտումների համար պատասխանատվությունը սահմանվի հիմնականում ֆինանսական սանկցիաներով,
- Ձևավորվի հարկային վեճերի քննարկման մասնագիտացված դատարան,
- Կրճատվեն ձեռներեցների հայցի քննարկման ժամկետները:

4. Տնտեսություն. Ո՞րն է տնտեսական աճը խթանելու Ձեր տեսլականը: Հատկապես ո՞ր ոլորտներն են Ձեզ համար առաջնային եւ ինչպիսի՞ քաղաքականություն Դուք կառաջարկեիք Վրաստանի խորհրդարանին եւ կառավարությանը:

Վրաստանի տնտեսությունը հենվում է լիբերալիզմի վրա, ինչը երկրի տնտեսական ակտիվությունում կապված է մասնավոր սեկտորի դերի աճի հետ: Վրաստանի համար որպես գլխավոր ուղղություն մնում է բյուջետային համակարգերի կատարելագործումը և հարկային վարչարարության հետագա բարելավումը, ճկուն դրամա-վարկային քաղաքականության վարումը, տնտեսական ճգնաժամերի հաղթահարումը, հետագա տնտեսական աճը: Վրաստանը, վրացական տնտեսության բաժնում նշանակալից ուշադրություն կհատկացնի գյուղատնտեսության զարգացմանը, իսկ մասնավորապես գյուղատնտեսությունում՝ պետական ներդրումների իրականացմանը, արտահանման աջակցությանը, մասնավոր ներդրումների գրավիչ դարձնելուն, իրացման շուկաների որոնման գործում պետության աջակցությանը և կեղծարարության դեմ պայքարին: Պետական ներդրումներ իրականացվում են. արտադրական ենթակառուցվածքում (այդ թվում արտահանման արտադրանք թողարկող ձեռնարկություններում), տեխնիկայի և նոր տեխնոլոգիաների արմատավորման, ոռոգման և դրենաժային համակարգերի ստեղծման, հաղորդակցությունների շինարարության, որակյալ արտադրանքի արտադրության աջակցության, հողի որակի և բաղադրության գնահատման մեջ:

Մասնավոր ներդրումների համար ստեղծվեց կատարելագործված և մանրամասն տեղեկատվական համակարգ Վրաստանում գոյություն ունեցող ագրարային ռեսուրսների մասին: Կստեղծվի և կզարգանա հողի շուկան: Պետությունը մասնակցություն կունենա վրացական արտադրանքի գովազդին միջազգային շուկաներում, Վրաստանը կպայքարի կեղծարարության դեմ ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս՝ անհրաժեշտության դեպքում:

5. Աշխատանք. *Ինչպիսի՞ քաղաքականություն պետք է իրականացնի կառավարությունը գործազրկության հաղթահարման ուղղությամբ:*

Պետության գլխավոր հոգսը նրա քաղաքացին է, ինչը նշանակում է, որ իշխանությունը պետք է օժանդակի միջին շերտի ստեղծմանը, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը և քաղաքացու դրամի հետ հարաբերության մեխանիզմների պարզեցումը համապատասխան օրենսդիր և սիստեմային փոփոխություններով: Մինևույն ժամանակ երկրում այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ ներդրման իրականացմանը ոչ մի տեսակ վտանգ չի սպառնում և հնարավոր է բիզնեսի և գույքի պաշտպանվաղության երկարաժամկետ կանխագուշակում, ինչին հարկավոր է նույնպիսի օրենսդրական բազա:

6. Առողջապահություն. *Ինչպիսի՞ քաղաքականություն կվարեիք՝ ավելացնելու առողջապահության հասանելիությունն ու որակը:*

Վրաստանին հարկավոր է իրատեսական և ժողովրդին կողմնորոշված սոցիալական և առողջապահական քաղաքականություն, որով էլ պետք է ապահովվի Վրաստանի քաղաքացիների պատվավոր ծերությունը և արմատախիլ արվի աղքատությունը:

Պետությունը պետք է ապահովի աղքատության գծից ներքև գտնվող մարդկանց սոցիալական պաշտպանությունը:

Առողջապահության քաղաքականությունը հենվում է սեփականության և ֆինանսավորման արդարացի ձևին, պետական ֆինանսավորմանը: Առողջապահության երկարաժամկետ պլանավորման համար հարկավոր է հուսալի տեղեկատվություն բնակչության առողջության իրավիճակի և համակարգի աշխատանքի մասին:

Առողջապահության բնագավառում գերակայող է աղքատության գծից ստորև գտնվող բնակչության պետական ապահովագրությունը բազիսային փաթեթով: Վրաստանի առողջապահության գլխավոր ուղղությունն է պետական ներդրումների իրականացում առողջապահության ենթակառուցում:

Սոցիալական և առողջապահության հիշատակված քաղաքականությունը այս ուղղությամբ անցկացված առողջապահության համակարգի ամուր երաշխիքն է:

7. Սոցիալական անվտանգություն. *Ինչպիսի՞ քաղաքականություն էք նախատեսում սոցիալական անվտանգության բերալավման ուղղությամբ:*

Պետության գլխավոր հոգսը մարդն է. :

- Վերանայի ապրուստի նվազագույնը,
- Փոխի ապրուստի նվազագույնի հաշվարկի կարգը,
- Հավասարվի կենսաթոշակը ապրուստի նվազագույնին,

- Մշակվի հասցեագրված սոցիալական օգնության համակարգ:

8. Տեղական ինքնակառավարում. *Ձեր կարծիքով ինչպե՞ս պետք է Վրաստանում կազմակերպվի տեղական ինքնակառավարումը:*

Անհրաժեշտ է ինքնակառավարությունների ապակենտրոնացում, ինչը նախատեսում է նրանց գույքի և ֆինանսների վերահսկում, կենտրոնական իշխանության մոնիտորինգի ներքո:

9. Տարածքային ամբողջականություն. *Ինչպիսի՞ քաղաքականություն կվարեիք երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու եւ ժողովուրդների միջև վստահություն կառուցելու ուղղությամբ:*

Մենք մերժում ենք ուժի գործադրմամբ հակամարտությունների կարգավորումը: Ցանկանում ենք միավորվել, և արխագ և օս ժողովուրդների հետ միասին ապրել:

- Պետք է ընդհանուր լեզու գտնենք արխագների և օսերի հետ, Վրաստանը, այդ թվում, Արխագիան և Հարավային Օսեթիան, գոյություն չեն ունենա առանց արխագների և օսերի, սակայն ոչ Արխագիան և ոչ էլ Հարավային Օսեթիան գոյություն չեն ունենա Վրաստանից դուրս:
- Մենք պետք է ստեղծենք վրացիների և արխագների, վրացիների և օսերի հետ միասին ապրելու պատվավոր պայմաններ: Այս պլանի իրականացման համար առաջին քայլը պետք է լինի Ախալգորիի և Գալիի շրջանների և Կոդորի կիրճի զինաթափումը,
- Տարհանվածների անվտանգ վերադարձ,
- Միայն միջազգային ոստիկանական ուժերի վերահսկողության հաստատում,
- Միջազգային հովանավորությամբ միասնական տնտեսական նախագծերի իրականացում:

Վրաստանի գերակայություն պետք է դառնա գրավչության քաղաքականությունը՝ վրացական պետության ժողովրդավարական կառուցվածքի տնտեսական զարգացման մոդելը և թափը, հավասար և ազատ հասարակություն, ներդաշնակ և հավասարաչափ զարգացած տարածաշրջանները պետք է ստեղծեն եվրոպական ոճի գրավիչ վրացական միջավայր:

Ռուսաստան, ԱՄՆ և Եվրոպա- այս եռանկյունին բնական եռանկյունի է, որից Վրաստանը ոչ կարող է փախչել և ոչ էլ պետք է փախչի: Վրաստանը կա և կլինի Ռուսաստանի հարևանը, Ամերիկայի գործընկերը և Եվրոպայի մասը: Վրաստանը հավասարակշռված

քաղաքականության միջոցով հնարավոր է դառնա այս եռանկյան գլխավոր խաղացողը, ոչ թե ուրիշի խաղերի օբյեկտը, այլ սեփական արտաքին քաղաքականության հեղինակը:

Վրաստանը ձգտում է Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը միմյանց ազգային շահերի հաշվառումով: Վրաստանը ողջունում է Ռուսաստանի մերձեցումը Եվրոպային և լիցքաթափման քաղաքականությանը ԱՄՆ-ի հետ: Վրաստանը հաշվի է կառնի Ռուսաստանի շահերը Հյուսիսային և Հարավային Կովկասում:

10. Սեռական փոքրամասնությունների իրավունքներ. *Ո՞րն է Ձեր մոտեցումը սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և հասարակական-քաղաքական կյանքում նրանց ավելի լավ ինտեգրման խնդրի վերաբերյալ:*

Երկիրը պետք է հոգա յուրաքանչյուր քաղաքացու մասին: Այդ թվում սեռական փոքրամասնությունների իրավունքների, նրանց հասարակական-քաղաքական կյանքին ինտեգրման մասին:

11. Կանանց մասնակցությունը քաղաքական կյանքին. *Խնդրում ենք նկարագրել քաղաքական կյանքին կանանց մասնակցությունն ավելացնելու վերաբերյալ Ձեր մոտեցումները (առկայության դեպքում):*

- Գենդերային հավասարության հետ կապված հասարակական հետաքրքրության աճ,
- Իշխանության առաջին անձանց կողմից քաղաքականությունում կանանց մասնակցության աճին աջակցություն
- Կանանց ընդգրկվածությունը քաղաքական կյանքին՝ ներկայացուցչություն օրենսդիր և գործադիր իշխանությունում,
- Կուսակցությունների կողմից որոշումների ընդունման մարմիններում գենդերային անհավասարակշռության գոյություն խոստովանում և իրավիճակը ուղղելու ցանկություն,
- Գենդերային հարցերով հանրային քննարկումների ակտիվացում,
- Պետության կողմից կուսակցությունների խրախուսման նախաձեռնություն կուսակցական ցուցակներում գենդերային հավասարակշռության ավելացման կապակցությամբ,
- Կանանց կուսակցական կազմակերպությունների կողմից անհրաժեշտ է օժանդակություն քաղաքական գործունեությունում ընդգրկելուն:

12. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ. *Ինչպիսի՞ քաղաքականություն կիրականացնեիք՝ ապահովելու ազգային փոքրամասնությունների լիարժեք մասնակցությունը և ինտեգրումը Վրաստանի սոցիալ-քաղաքական կյանքին:*

Ազգային փոքրամասնությունների ինտեգրման քաղաքականության տեսակետից, Վրաստանը ամեն ջանք կգործադրի Վրաստանի բնակչության, հատկապես ոչվրացական ծագումով Վրաստանի քաղաքացիների ինտեգրումը և ընդգրկվածությունը երկրի բարգավաճման գործին: Կհոգա նրանց վրաց լեզվի ուսուցման և կրթության մակարդակի բարձրացման համար, ինչպես նաև ինքնության, լեզվի, մշակույթի և դավանանքի պահպանման մասին:

13. Շրջակա միջավայրի պաշտպանություն/բնապահպանություն. *Խնդրում ենք ներկայացնել Ձեր առաջարկները (առկայության դեպքում) առողջ և անվտանգ շրջակա միջավայր ստեղծելու վերաբերյալ:*

Վրաստանը առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում բնական կատակլիզմների, աղետային դժբախտությունների և զանգվածային արտադրական միջադեպերի կանխարգելման հարցին, ինչի համար նախապես կմշակի նշված հիմնախնդիրներ նախապես կանխագուշակելու և խուսափելու, ճգնաժամերը վարելու ծրագրեր: Վրաստանը ապահովում է ռադիոակտիվ հրթիռային վառելանյութից, վնասակար քիմիական նյութերից երկրի տարածքի մաքրագրումը: Օդի աղտոտման աղբյուրների վրա վերահսկողության հաստատման, սննդամթերքների անվտանգության միջոցների անցկացման Վրաստանի օրենսդրությունը Եվրոպայի և ՄԱԿ-ի չափանիշերի հետ համապատասխանեցում:

Մարդու և բնության կենսական հիմքերի ամբողջականության մեջ պահպանում, դա ինչպես մեր երկրի, այնպես էլ աշխարհի ժողովուրդների համար մեկ հոգսը պետք է լինի:

Կենսականորեն անհրաժեշտ է այլընտրական էներգոպաշարների որոնումը, կիրառումը և դրանց ժողովրդականացումը, քանզի Վրաստանը ունի ոչավանդական և նորացվող էներգետիկայի զարգացման մեծ կարողություն, թերևս դեռ համարյա չեն օգտագործվում էներգիայի այնպիսի կարևոր աղբյուրներ, ինչպիսին է Արևի և Քամու էներգիան:

Վրաստանի համար համեմատաբար նոր պրակտիկա է անասունների մնացորդների վերամշակումը և դրանից կենսագազի արտադրումը:

Էներգիայի նշանակալից աղբյուրներից են Արևի մարտկոցները: Էլեկտրոնային սարք, որը Արևի էլեկտրամագիսային ճառագայթումը վերափոխում է էլեկտրաէներգիայի և տալիս է անընդհատ հոսանքի հնարավորություն:

14. Ռազմավարական գործընկերություն. *Ո՞ր երկրի և կամ երկրների դաշինքի հետ Դուք կփորձեք հաստատել ռազմավարական, այդ թվում՝ ռազմական-ռազմավարական գործընկերություն: Ինչպիսի՞ քայլեր կձեռնարկեք այդ ուղղությամբ:*

Հավասարակշռված քաղաքականությունը արտաքին քաղաքականության ուղղություններից մեկն է և նպատակաուղղված է Վրաստանին մատչելի միջազգային միջավայրի

ձևավորմանը: Այս նպատակին հասնելու համար Վրաստանը համագործակցում է միջազգային համագործակցության հետ երկկողմ և բազմակողմանի ձևաչափով:

Վրաստանը խորացնում է երկկողմ ռազմավարական գործընկերությունը ԱՄՆ-ի հետ, գնահատանքի է արժանի ԱՄՆ-ի աջակցությունը Վրաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարցում, ինչպես նաև ժողովրդավարական բարեփոխումների իրականացման, շուկայական տնտեսության զարգացման, քաղաքացիական հասարակության ձևավորման մեջ:

Վրաստանը ձգտում է Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը միմյանց ազգային շահերի հաշվառումով: Վրաստանը ողջունում է Ռուսաստանի մերձեցումը Եվրապային և լիցքաթափման քաղաքականությունը ԱՄՆ-ի հետ: Վրաստանը հաշվի կառնի Ռուսաստանի շահերը Հյուսիսային և Հարավային Կովկասում: Վրաստանը կսկսի երկխոսություն Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցության խորացման մասին:

Վրաստանը ճանաչում է ընդհանուր եվրոպական արժեքները և համարում է, որ սեփական ազգային արժեքները եվրոպական արժեքների մասն է: Վրաստանը ողջունում է Եվրամիության քաղաքականությունը, որը Ռուսաստանի հետ ավելի ընդգրկվածության և համագործակցության կողմն է ուղղված: Ռուսաստան Վրաստան հարաբերությունները բարելավելու համար կարևոր է մի կողմից Վրաստանի Եվրամիության հետ, իսկ մյուս կողմից Եվրամիության Ռուսաստանի հետ մերձեցումը:

Արտաքին քաղաքականության այս եռանկյան շրջանակներում հնարավոր կդառնա ազգային անվտանգության ապահովման համար տարածաշրջանային համագործակցությունը, որտեղ ընդգրկված կլինեն տարածաշրջանի բոլոր պետությունները, այդ թվում Ուկրաինան, Մոլդովան, Ռուսաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, Հայաստանը, Իրանը և Վրաստանը, որտեղ Վրաստանի աշխարհա-ռազմավարական դերը տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորման գործում կդառնա ամենակարևոր գործոնը: Նման բնապահպանական պայմաններում, Վրաստանին նույնպես, ինչպես տարածաշրջանի թվարկած երկրների համար կստեղծվի ավելի լավ բնահող բազմակողմանի համագործակցության համար համաժողովներում, ինչպիսիք են Մակ-ը, ԵԱՀԿ-ն և Եվրախորհուրդը՝ արգասաբեր գործունեության համար:

15. Տարածաշրջանային քաղաքականություն. *Ինչպիսի՞ն է կլինի Ձեր քաղաքականությունը Հարավային Կովկասի եւ Մեծովյան տարածաշրջանների հանդեպ:*

Անձամբ Արևմուտքի մոտեմամբ Վրաստանը միշտ կախված կլինի Ռուսաստանից բազմաթիվ ոլորտներում և նա այլ ճանապարհ չունի, եթե ոչ ուժեղ հարևանի հետ կոնստրուկտիվ համագործակցությունը: Վրաստանն այսօր հասկացվում է, որպես «Մեծ մոտ Արևելքի» մաս և ահաբեկչական վտանգի գլխավոր տարածաշրջան: Վրաստանի դերը նշանակալիորեն մեծացավ Աֆղանստանի և Իրաքի կամպանիաների արդյունքում:

Անջատողական տարածաշրջանները Վրաստանում արևմտյան պետությունների առանձնահատուկ վրդովմունքի առարկա են, նրանք այս տարածաշրջաններում տեսնում են ահաբեկչության պոտենցիալ ապաստարան: Ճիշտ այս հանգամանքների պատճառով արևմուտքի համար այս տարածաշրջանների անկախության ճանաչման քաղաքականությունը դարձավ գերակայող:

Վրաստանը միշտ դառնում է Ռուսաստանի պետական աշխարհառազմավարական հետաքրքրության պրիզման: Տրանսկովկասը անբաժանելիորեն կապված է Հյուսիսային Կովկասի հետ, որը Ռուսաստանի Դաշնության մասն է: Հարավային Կովկասի անկախությունը, Ռուսաստանի անվտանգությանը հավելյալ հիմնախնդիրներ ստեղծեց: Ռուսաստանը իր հերթին, սառը պատերազմի կանոններով է շարունակում միջազգային գործունեությունը:

Ռուսաստան-Վրաստան հարաբերություններին երկար ժամանակ է արդեն խանգարում է անվստահությունը, որի բորբոքման մեջ երկու կողմերն էլ բաժին ունեն: Այս հարաբերությունները ընդհանրապես դադարեցին 2008 թվականի օգոստոսի իրադարձություններից հետո, ինչը նշանակալիորեն մեծացրեց անվտանգության ռիսկը Վրաստանի համար: Երկար ժամանակ նման իրավիճակում գտնվելը նշանակում է անուղղելի արդյունքներ: Կկարողա՞ն Վրաստանը և Ռուսաստանը նորովի հարաբերություններ հաստատել: Այս հարցի պատասխանը մեծ մասամբ Վրաստանից է կախված: Երկիրը սեփական շահերի պաշտպանության հաշվին պետք է ի նկատի ունենա Ռուսաստանի ազգային շահերը: Կովկասյան տարածաշրջանում կրկին գոյություն ունի Ռուսաստան-Վրաստան հարաբերությունների կոնստրուկտիվ զարգացման հնարավորություն: Իսկ դրան հասնելը միայն այն ժամանակ է հնարավոր, եթե Վրաստանը լավ գիտակցի իր պատասխանատվությունը ներքին թուլությունները արմատախիլ անելու գործում:

16. Պաշտպանության քաղաքականություն. *Ինչպե՞ս կկազմակերպե՞ք երկրի պաշտպանության համակարգը:*

Վրաստանը պաշտպանության քաղաքականության և անվտանգության համակարգի կատարելագործման, ամուր անվտանգության քաղաքականության և առողջ ռազմա-քաղաքացիական հարաբերությունների համար գերակայող է համարում իրականացնել հետևյալ ծրագրային գործողությունները.

- Ռազմական և անվտանգության համակարգերի քաղաքացիական վերահսկում, ժողովրդավարության որակի բարձրացում,
- Խորհրդարանում գործող այսպես կոչված «Վստահության խմբի» իրավասության ուժեղացում – դրանց համար ռազմական և անվտանգության համակարգերի մոնիտորինգի իրավունքի օրինականացում,

- Առանձին ուժային հիմնարկություններում հասարակական մոնիտորինգի խորհուրդների գործարկում, որպէս ռազմա-քաղաքացիական հարաբերության զարգացման համար անհրաժեշտ ձևաչափ,
- Պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի առանց պայմանի տարբերակում, պաշտպանության նախարարությունը որպէս լրիվ քաղաքացիական կառույց ձևավորելը: Գլխավոր շտաբի բազայի վրա բանակների վերակազմավորումն ավարտելուց հետո Միացյալ շտաբների հրամանատարության ստեղծում,
- Գլխավոր տեսչությունները որպէս մեկ ծառայություն ձևավորում և նրա խորհրդարանի ենթակայության տակ անցում,
- Ազգային անվտանգության խորհրդի լրիվ լուծարում ազգային անվտանգության խորհրդի դերի և գործառնությունների սահմանում,
- Ներքին գործերի նախարարությունից անվտանգության ստորաբաժանումների դուրսբերում և դրա բազայի վրա հետաքննության դաշնային բյուրոյի կամ հակահետախուզության պետական դեպարտամենտի ստեղծում և նրա ենթակայությունը Գերագույն գլխավոր հրամանատարի,
- Ազգային անվտանգության խորհրդի ենթակայությունում ուժային գերատեսչությունների ղեկավարների կոմիտեի ստեղծում, որի գլխավոր գործառնությը կլինի նշված կառույցների լրիվ համակարգման իրականացում,
- Հետաքննության դաշնային բյուրոյի համար (կամ հակահետախուզության պետական դեպարտամենտի) ուժային գերատեսչությունների օպերատիվ-որոնման միջոցառումների մասին համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացում,
- Ազգային անվտանգության խորհրդի ենթակայությունում հակահաբեկչական և հակակոռուպցիոն օպերատիվային ծառայության ստեղծում,
- Գնումների պետական դեպարտամենտի ենթակայություն խորհրդարանին:

Նշված գործողությունների իրականացման արդյունքում հնարավոր կդառնա ազգային անվտանգության այնպիսի քաղաքականության մշակում, որը պատշաճորեն կպատասխանի սպառնալիքներին, ռիսկերին և մարտահրավերներին: Երկիրը կխուսափի ներքին դեստրուկցիոն գործողություններից և արտաքին ուժերի ուժային միջամտությունից:

17. Անվտանգության քաղաքականություն. Որո՞նք Ձեր կարծիքով պետք է լինեն Վրաստանի ազգային անվտանգության հիմնարար սկզբունքները:

Ազգային անվտանգության քաղաքականությունը և անվտանգության համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապվում է ազգային շահերին և արժեքների թեմաներին, որոնք հիմնականում որոշում են մարտահրավերները և սպառնալիքները: Ճիշտ ազգային շահերով և արժեքներով պայմանավորված, նպատակաուղղված անվտանգության քաղաքականությունն է բերում համանման արդյունքներ:

Վրաստանի անվտանգության մթնոլորտի բաղկացուցիչ բոլոր բաղադրիչների վերլուծությամբ հնարավոր է ազգային անվտանգության քաղաքականության մշակում, որը ապահովում է նշված միջավայրում ազգային արժեքների վրա հիմնադրված շահերի անցկացում և երկրի առջև գոյություն ունեցող մարտահրավերներին և սպառնալիքներին ճիշտ արձագանքում:

Վրաստանի ազգային արժեք է Վրաստանի քաղաքացիների անվտանգության ապահովումը միջազգային հասարակայնության կողմից ճանաչված պետական սահմանների շրջանակներում: Անվտանգության ապահովման համար Վրաստանը ղեկավարվում է միջազգային իրավունքի ճանաչված նորմերով: Վրաստանը ձգտում է դեպի հարևանների հետ խաղաղ համագործակցության միջավայրի ձևակերպում: Տարածաշրջանային անվտանգության համակարգերի ձևավորման, պետությունների միջև երկկողմ բարիդրացիական համաձայնությունների և շրջանակային պայմանագրերի հիման վրա նրանց հետ հետևողական, հաջորդական, հավասարակշռված արտաքին քաղաքականության իրականացման կողմը:

Վրաստանի նպատակն է ձևակերպել անվտանգության այնպիսի համակարգ, որը կստեղծի նախապայման երկրի որպես իրավական և ժողովրդավարական հավասարակշռված պետություն զարգանալու համար:

Այս ուղղությամբ, Վրաստանի համար ընդունելի է Իսրայելի պետության անվտանգության համակարգի և այլ համանմանությունների օրինակը (սպառնալիքների և մարտահրավերների նմանության և անվտանգության միջավայրի հաշվառումով):

18. Աբորտ (հղիության արհեստական ընդհատում). *Անհրաժեշտ է արդյոք Ձեր կարծիքով արժողի արգելումը: Ինչու ?*

Անպայման է քաղաքացիական հասարակության սեռական կրթության աճը, ինչը ինքնըստինքյան կկրճատի չպլանավորած հղիությունների թվաքանակը:

Հղիության արհեստական դադարեցումը թույլատրելի պետք է լինի բժշկի երաշխավորությամբ, միայն մոր առողջության և կյանքի համար վտանգի առկայության դեպքում:

Ծնելիության աճ, ժողովրդավարական պատկերի փոփոխում, երկրի առջև գոյություն ունեցող մարտահրավեր է:

19. Կոմերցիոն վարկեր. *Արդյոք կոմերցիոն բանկերը պետք է իրավունք ունենան բռնագրավել անշարժ գույքի (բնակարան) սեփականությունը, եթե անձը անկարող է վճարել հարկերը: Ինչու ?*

Անպայման վարկատուները պետք է ունենան վարկը/պարտք վերցրած գումարը ի պոթեկային ծանրաբեռնված բնակելի տարածքի հաշվին վերցնելու իրավունք: Սրանից ելնելով, ոչմի այլ դեպքում վարկատուի փողը կորցնելու ռիսկերը շատ մեծ են:

20. Գյուղատնտեսական հողատարածք. *Ինչպիսի՞ն է Ձեր մոտեցումը Վրաստանում գյուղատնտեսական հողատարածք ձեռք բերելու օտարազգի քաղաքացիների իրավունքի վերաբերյալ:*

Կտրուկ դեմ եմ, որ օտար երկրի քաղաքացիները Վրաստանում ձեռք բերեն գյուղատնտեսական հող:

Այնքան ցածր է Վրաստանում կենսական մակարդակը և քաղաքացու եկամուտը, որ նշված օրենքով Վրաստանի բռնագրավում տեղի կունենա ֆինանսապես ուժեղ այլ երկրի քաղաքացիների կողմից: